ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

---------- 2020 թվականի №Ա
քաղ. Երևան

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2005 թվականի հուլիսի 8-ի №95Ն որոշմամբ հաստատված՝ բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 4.6 կետի «գ» ենթակետը, որի համաձայն՝ մատակարարի կամ բաժանորդի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի փոխարինման կամ ստուգաչափման նպատակով դրա ապահավաքակցման դեպքում մատակարարի կողմից տեղադրվող առևտրային հաշվառքի սարքը պետք է համալրված լինի առնվազն 30 օր հիշողություն ունեցող գազի ճնշման և ջերմաստիճանի էլեկտրոնային ճշտիչներով,

բ) որ Հանձնաժողովը 2020 թվականի օգոստոսի 20-ին №ՍԱ/34.4-Մ2-8/3538-2020 գրությամբ դիմել է «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն՝ (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրելու Կանոնների 4.6 կետի «գ» ենթակետի պարտավորության կատարման վերաբերյալ տեղեկատվություն,

գ) որ Ընկերությունը 2020 թվականի օգոստոսի 28-ին №02-24/4245 գրությամբ հայտնել է, որ շահագործվող, բայց էլեկտրոնային ճշտիչներով դեռ չհամալրված առևտրային հաշվառքի սարքերը, Ընկերության կապիտալ նորոգման պլանի համաձայն, կհամալրվեն մինչև 2020 թվականի ավարտը,

դ) որ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2020 թվականի սեպտեմբերի 16-ին Կանոնների 4.6 կետի «գ» ենթակետով սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական

վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2020 թվականի սեպտեմբերի 16-ին №ԳԲ/34.4-Մ2-8/3974 գրությամբ,

ե) որ վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը սույն թվականի հոկտեմբերի 6-ի №01-24/4826 գրությամբ տեղեկացրել է, որ արդեն իսկ իրականացվել են շուրջ 4800 առևտրային հաշվառքի սարքերի էլեկտրոնային ճշտիչով համալրման աշխատանքներ, սակայն ներկայումս շահագործվող 500 առևտրային հաշվառքի սարքեր դեռ էլեկտրոնային ճշտիչով չեն համալրվել՝ տվյալ տարածքներ մուտք գործելու անհնարինության պատճառով,

զ) որ հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ շուրջ 500 առևտրային հաշվառքի սարքերը Ընկերության կողմից էլեկտրոնային ճշտիչով չհամալրելը պայմանավորված է Ընկերության կամքից անկախ հանգամանքներից, թեև Ընկերությունը ջանքեր է գործադրել,

և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Հանձնաժողովի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 16-ից Ընկերության նկատմամբ Կանոնների 4.6-րդ կետի «գ» ենթակետով սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով հարուցված վարչական վարույթը:
2. Ընկերությանը՝

1) գործադրել լավագույն ջանքերը էլեկտրոնային ճշտիչով չհամալրված բոլոր առևտրային հաշվառքի սարքերը համալրելու ուղղությամբ և մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը տեղեկատվություն ներկայացնել Հանձնաժողով.

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
------- 2020թ.